ՆԱԽԱԳԻԾ-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«-----» ապրիլի 2011թ.** **N------ -Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N609-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան.

**Երևան քաղաքի ավագանին** ***որոշում է.***

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1655-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N609-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 609-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի N 609–Ա որոշմանը համաձայնություն տալու մասին>> Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ 2011 թվականի «Զևավորում» ՓԲԸ-ի գործունեության ծրագրով նախատեսվել է իրականացնել մեծածավալ աշխատանքներ Երևան քաղաքի արտաքին ձևավորման գծով: Ըստ կանոնադրության՝ ընկերությունը կարող է իրականացնել հետևյալ գործունեության տեսակները՝

1. տոնակատարությունների, մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում,
2. բեմերի, ամբիոնների կառուցում, տեղադրում, վերանորոգում,
3. քաղաքի ձևավորման աշխատանքներ,
4. էլեկտրատեխնիկական համակարգերի նախագծերի մշակում և սպասարկում,
5. փողոցների դրոշակազարդարման և զարդարման աշխատանքներ,
6. գովազդային ցուցանակների պատրաստում, տեղադրում և սպասարկում և այլն:

Ընկերությունը 2011թ. նախատեսում է ընդլայնել իր գործունեությունը՝29,9մլն. դրամ 2010 թվականին կատարված աշխատանքների դիմաց, իրականացնելով շուրջ 250.0 մլն. դրամի աշխատանքներ: Աշխատանքների իրականացումը կատարվելու է թե՛ ֆիզիկական և իրավաբանական անձանց պատվերներով /վճարովի ծառայություններ/ և թե՛ Երևանի բյուջեի միջոցների հաշվին՝ համաքաղաքային միջոցառումների մասով:

2011 թվականին նախատեսված 8.4 անգամ աշխատանքների ծավալների աճը ենթադրում է հաստիքային միավորների ավելացում 27-ով՝ամսական աշխատավարձի 1736 հազ. դրամ ֆոնդով և գործող 6 հաստիքների դրույքաչափերի բարձրացում 44.1%-ով, կամ 150.0 հազ. դրամ ամսական ֆոնդի աճ:

Ընդհանուր աշխատավարձի ֆոնդը կկազմի 2226,0 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N609-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 1-ի N609-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N609-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 1-ի N609-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ